«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Խանում Ալոյան

ՄԱՐԶ ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գեղաձորի Արտակ Օհանյան անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Բովանդակություն……2
Ներածություն……3
Արժեքային համակարգ……5
Երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա……9
Մաթեմատիկա……10
Մայրենի……11
Ես և շրջակա աշխարհ……13
Հանրակրթության բարեփոխման անհրաժեշտությունը……15
Եզրակացություն……16
Գրականության ցանկ……18
Հավելված……19

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենաադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար[1]:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու

[1] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական դասարաններում[2]:

Նախատեսվում է, որ դպրոցական յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- Ունենա ազգային ինքնագիտակցություն,
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն (Նկ.1):

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ, նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

[2] Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, էջ 112:

1.սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2.նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,

3.ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից,

4.դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից,

5.սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6.սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

7. ստեղծագործական, զգացմունքային մթնոլորտի ձևավորումից, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա[3]:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, խնդիրները, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները (Նկ.2):

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

[3] Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, էջ 118:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում[4]:

Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[5]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարեւորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[6]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները

---

[4] Ա.Վ. Մուդրիիկ, Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում, Երևան 1986, էջ 86:
[5] Վ. Ա. Սուխոմլինսկի Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:
[6] Վ. Ա. Սուխոմլինսկի Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 64 էջ:

(ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը եւ այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն

Կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետեւ ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք[7](Նկ.3):

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքայինդաստիարակչական ներգործության բարձրացման կարեւոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում(Նկ.4):

[7] «Նախաշավիղ», գիտամեթոդական հանդես:

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»[8]:

Երաժշտություն, կերպարվեստ և տեխնոլոգիա

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են ոչ միայն «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների, այլ նաև «Կերպարվեստ», «Երաժշտություն» (Նկ.5), «Տեխնոլոգիա» և ուսուցանվող մյուս առարկաների դասաժամերին: Վերը նշված դասաժամերի երեխաների մոտ նույնպես ձևավորվում է արժեքային համակարգ: Սովորողը համոզվում է, որ երաժշտությունը լեզու է, որը առանց թարգմանության հասկանում են տարբեր ազգության մարդիկ: Այն բարեկամական մի կամուրջ է, որով սովորողները կարողանում են հաղորդակցվել և ճանաչել շատ ժողովուրդների, տեսնել և ընկալել գեղեցիկը, բարին: Գնահատում են հայ երաժշտության ազգայնությունն ու ինքնատիպությունն և գիտակցում, որ յուրաքանչյուրի սուրբ պարտքն է լավ իմանալ թե՛ մայրենի և թե՛ ազգային երաժշտության լեզուն:

Կերպարվեստի դասաժամերի ընթացքում իմանում են ինչպես են նկարիչները ստեղծում նկարները: Ընդլայնվում է նրանց աշխարհայացքը: Գնահատում են շրջապատող աշխարհը, գույները, բնությունն ու կենդանական աշխարհը, տարբերում են դրականը բացասականից, լավը վատից, գեղեցիկը տգեղից: Փորձում են ամեն տեղ տեսնել գեղեցիկը, դուրեկանն ու հաճելին[9] (Նկ.6):

Տեխնոլոգիայի դասընթացների ընթացքում զարգանում է նրանց գիտելիքները, սովորողների մոտ ձևավորվում է բարձր ճաշատ, օրինակ ինչպես կահավորել սենյակը կամ սպասքը:

Սովորում են խնայողություն, համագործակցություն, միմյանց գնահատել, գնահատել դիմացինի աշխատանքը, գեղեցիկ իրեր պատրաստել, համադրել գույները, աշխատել մաքուր, պահպանել անվտանգ աշխատելու կանոնները, աշխատանքային գործիքներից օգտվելու ճիշտ ձևերը, ինչպես օգտվել էլետրասարքավորումներից, գազօջախից, սեղանից և այլն:

Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները քաջ գիտակցում են, որ մեր երկրին, մեր հասարակությանը անհրաժեշտ են գիտակից, բանիմաց, բարեկիրթ քաղաքացիներ, ովքեր օժտված կլինեն մարդկային բարձր արժանիքներով:

---

[8] Ю. К. Бабанского, С. Нойнера и др., Педагогика, под. ред. М., 1978, 59с.

[9] Մ. Պետրոսյան, «Կերպարվեստ» (Ուսուցչի ձեռնարկ), Երևան, 2014, 22-29:

Տարրական դպրոցն ավարտող երեխան պետք է ունենա որոշակի չափով ձևավորված վարքագիծ, տիրապետի վարվեցողության կանոններին, տարբերի ճիշտն ու սխալը, ընկալի, գնահատի գեղեցիկը, լավն ու բարին, ազնվությունն ու արդարությունը:

Արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է նաև խաղերի, հնարների, վարժանքների ճիշտ ընտրությունը: Օրինակ «Նա սիրում է, նա չի սիրում», որի նպատակն է մարդկանց վարքագծի տարբեր դրսևորումների օրինակով օգնել տարբերակելու այն վերաբերմունքը, որը կարելի է գնահատել որպես սեր հայրենի երկրի հանդեպ: Կամ «Ես ասեմ, դու լրացրու» խաղը, որի նպատակն է սովորողների մոտ զարգացնել մտքի ճկունություն, արագ արձագանքելու կարողություն, ուշադրության խթանում:

Կամ օրինակ «Ա՛յ քեզ բան…» խաղը, որի ընթացքում բացահայտվում է սովորողների վերաբերմունքը Հայաստանի, հայերի, հայկականի վերաբերյալ (Նկ.7):

Մաթեմատիկա

Սովորողի մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածողություն, կռահելու կարողություն, սովորեցնել ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառել տարբեր գործնական խնդիրներ լուծելիս, դաստիարակել հարգանք աշխատանքի, մշակութային արժեքների, դրանք ստեղծողների նկատմամբ, ձևավորել և զարգացնել սովորողի ուշադրությունը, դիտողականությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը, հանդուրժողականությունը, ինքնուրույնությունը, հնարամտությունը, սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ (Նկ.8):

«Մաթեմատիկա» առարկան սովորողների համար հնարավություն է ընձեռում՝ զարգացնել տրամաբանական և ստեղծագործական ունակությունները, գիտելիքները կիրառելու, ինքնուրույն գործունեություն իրականացնելու կարողությունները և փորձը, նպաստել արժեքային համակարգի ձևավորմանը և սոցիալական հմտությունների զարգացմանը[10]:

Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: Մաթեմատիկայի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

• գիտակցի գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունը կյանքում, գիտակցի թվի, թվաբանական գործողությունների, դրանց հատկությունների կարևորությունը առօրեայում և հետագա ուսումնական գործընթացում,

[10] Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդուղյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան, «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար», ԿԱԻ հրատ., Երևան, 2004, էջ 40-49:

• գիտակցի մեծությունների, դրանց չափման կարևորությունը և անհրաժեշտությունն կյանքում և այլ ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս,

• գիտակցի ոչ խոսքային միջոցների՝ գծապատկերների, նշանների և պայմանանշանների դերը հաղորդակցման մեջ,

• զգա համաչափ ու ներդաշնակ պատկերների գեղեցկությունը, ձգտի ստեղծագործական աշխատանքների միջոցով գեղագիտական հաճույք ստանալ,

• գիտակցի առօրյա իրավիճակներում տարբեր ելքերի հնարավորությունը, զգա կազմակերպված տվյալներից օգտվելու հարմարավետությունը և գիտակցի տվյալները կազմակերպված ներկայացնելու կարևորությունը,

• գնահատի ճշտապահությունը, ազնվությունը, պարտաճանաչությունը,

• կարևորի ուշադիր և կենտրոնացված աշխատանքը,

• գիտակցի ուրիշների հետ աշխատելու անհրաժեշտությունը:

Մայրենի

Կրտսեր դպրոցի չորս տարիների ընթացքում էապես փոխվում է ընթերցանության դերը ուսուցման ողջ համակարգում: Այսպես՝ առաջին դասարանում աշակերտը չի տիրապետում կարդալու հմտությանը, մայրենին նրա համար դեռևս ուսուցման առարկա է, իսկ հաջորդ դասարաններում կարդալու հմտության ձևավորմանը զուգընթաց, այն դառնում է ուսուցման, ճանաչողության և զարգացման միջոց:

Կրտսեր դպրոցականի գրական զարգացման մյուս չափանիշը նրա ճա– նաչողական հետաքրքրությունների, գեղագիտական զգացմունքների զարգացման մակարդակն է, որը ևս ապահովվում է մայրենիի դասավանդմամբ:

Հանրակրթության համակարգում և, մասնավորապես, կրտսեր դպրուցում, մայրենի լեզուն առանձնահատուկ դեր ունի մի կողմից՝ որպես անձի ձևավորման, երեխայի կողմից աշխարհի ճանաչման, նրա մտավոր զարգացման, ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանական և պատկերավոր մտածողության ձևավորման հիմնական միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մյուս բոլոր առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ:

Արժեքային համարգի զարգացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել աշակերտի՝ համագործակցելու և հաղորդակցվելու գործուն պատրաստակամությունը (հուզական, մտավոր, հաղորդակցական, բարոյական որակներ), զարգացնել ինքնուրույնությունը,

նախաձեռնողականությունը և գործունեության տարբեր ոլորտներում համագործակցելու հմտությունները[11]:

Արժեքային համակարգ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- ✓ գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը.
- ✓ հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը (Նկ.9):,
- ✓ գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.
- ✓ գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը (Նկ.10):
- ✓ կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ (Նկ.11),
- ✓ կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- ✓ գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- ✓ գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հար- գանքի դրսևորման կարևորությունը (Նկ.12),
- ✓ հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթի հանդեպ,
- ✓ անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- ✓ դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- ✓ մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում (Նկ.13):

[11] Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան, Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան, Լ.Ալեքսյանյան, Վ. Պոտուկուրու «Համագործակցային ուսուցում», Վերապատրաստվողի ուղեցույց, «Անտարես», Երևան, 2006, էջ 57:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա՝		
•Գիտակցել մայրենի լեզվի և ազգային այլ արժեքների կարևորությունը և լինել դրանց կրողը, •Հասկանալ ընդունված կանոններին հետևելու և մարդկանց իրավունքները հարգելու կարևորությունը •Իմանալ ազգային խորհրդանիշները՝ օրհներգ, դրոշը և զինանշանը, •Գեղարվեստական տեքսերի միջոցով ծանոթանալ ինքնավերահսկման, արդարության,հերոսության և առաջնորդության գաղափարներին, •Ընդունել և վերլուծել անձնական որոշումները և անդրադառնալ դրանց արդյունքին, •գրական ստեղծագործության ընկալման միջոցով տեսնել և զգալ գեղեցիկը, •Ընթերցասիրության ձգտում դրսևորել:	•Կարևորել բարոյական չափանիշները և քրիստոնական ու համամարդկային արժեքները • Հասկանալ իրավունքների և պատասխանատվության արժեքը, մասնակցել դասարանական կանոներ ստեղծելու և դրանց կիրառելու գործին, •բարյացակամություն և հանդուրժողականություն դրսևորել դիմացինի տաղանդի, կարողությունների, համակրանքների և հակակրանքների հանդեպ, •գրական ստեղծագործության ընկալմամբ տեսնել գեղեցիկը, ձգտել դրսևորել ինքնակատարելագործման որակներ, •ընթերցողական ակտիվության արդյունքում գնահատել բարոյական արժեքները՝ բարություն, ազնվություն, մեծահոգություն, ամխտրականություն, հանդուրժողականություն, ազգային արժանապատվություն:	•Կարևորել գեղագիտական արժեքները, գնահատել գեղեցիկը, բարին և ճշմարիտը, •Բացատրել իրավունքների և պարտականությունների փոխադարձ կապը և դրնաք խախտելու հետևանքները, •ծանոթանալ այն կանոններին, որոնք մարդկանց օգնում են ընտանիքներում և համայնքներում միասին ապրել, աշխատել և որոշում կայացնել, •դրական ստեղծագործության ընկալման միջոցով տեսնել և ընկալել գեղեցիկը ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև արվեստի մյուս ձևերի ստեղծագործության մեջ, •Ճիշտ պատկերացում կազմել բարոյական արժեքների վերաբերյալ և դրանք օգտագործել ինքնադաստիարակության դպատակով:

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ:

Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխար հի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց: սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելա կերպի միջոցով «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ (Նկ.14),
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը, պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ (Նկ.15),
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները (Նկ.16),
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել,
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,

- գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում տեղեկատվական: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը: Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը[12]:

[12] ՀՀ ԿԳ Նախարարություն, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ս. Սարգսյան, Ռ. Սարգսյան, «Տարրական դասարանների Հայոց լեզու և Մաթեմատիկա», Երևան, 2007, 16:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Դպրոցում սովորողները ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին:

Արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է լինի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Այսպիսով, տարրական դասարաններում սովորողների արժեքային համակարգում պետք է ձևավորվի հետևյալը.

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը, պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,

- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել,
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,
- գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար,
- գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթի հանդեպ,
- անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

Գրականության Ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002:

2. Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987:

3. Ա.Վ. Մուդրիիկ, Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում, Երևան 1986:

4.Վ. Ա. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երեւան, 1977:

5. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երեւան, 1985:

6. «Նախաշավիղ», գիտամեթոդական հանդես:

7. Մ. Պետրոսյան, «Կերպարվեստ» (Ուսուցչի ձեռնարկ), Երևան, 2014:

8. ՀՀ ԿԳ Նախարարություն, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ս. Սարգսյան, Ռ. Սարգսյան, «Տարրական դասարանների Հայոց լեզու և Մաթեմատիկա», Երևան, 2007

9. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., Педагогика, под. ред., М., 1978.

10. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979.

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկար 1. Խմբային աշխատանք:

Նկար 2

Նկար 3 Զարգացնել երեխայի մոտ գեղագիտական ճաշակ:

Նկար 4:

Նկար 5:

Նկար 6:


Նկար 7:

Նկար 8:

Նկար 9:



Նկար 10:



Նկար 11:

Նկար 12:

Նկար 13:

Նկար 14:



Նկար 15:

Նկար 16: